ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«9» սեպտեմբերի 2022թ. № 940-Լ

ՀՐԱՄԱՆ

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 367-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հուլիսի 11-ի թիվ 806-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկի 11-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել տրանսֆերային գնագոյացման համադրելիության վերլուծություններ իրականացնելու նպատակով կիրառվող՝ միջազգային առևտրային տվյալների բազաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

9/9/2022

X

ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416 ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված
ՀՀ ՊԵԿ նախագահի

« 9 » սեպտեմբերի 2022 թ.
№ 940 - Լ հրամանի

ՑԱՆԿ
Տրանսֆերային գնագոյացման համադրելիության վերլուծություններ իրականացնելու նպատակով կիրառվող՝ միջազգային առևտրային տվյալների բազաների

№	Կազմակերպություն	Տվյալների բազա	Աշխարհագրական ծածկույթ	Բովանդակություն
1.	Բլումբերգ (Bloomberg)	Բլումբերգի տվյալների բազա	Բոլոր երկրները	Ֆինանսական շուկաների վերաբերյալ տվյալներ
2.	Բյուրո վան Դիկ (Bureau van Dijk)	Օսիրիս	Բոլոր երկրները	Կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվություն
		Օրբիս		
3"	Ռեյնջ ռոյալթի (Range royalty)	Ռեյնջ ռոյալթի	Եվրոպա	Ոչ նյութական ակտիվների արտոնագրային պայմանագրեր և ռոյալթիի դրույքաչափեր
4.	ՌոյալթիՍորս (RoyaltySource)	ՌոյալթիՍորս	Բոլոր երկրները	Ոչ նյութական ակտիվների արտոնագրային պայմանագրեր
5.	Ինտերֆաքս (Interfax)	ՍՊԱՐԿ	ՌԴ, Ուկրաինա և Ղազախստան	Կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվություն
6.	Ինվոտեքս Գրուպ (Invotex Group)	Ռոյալթի Քընեքշընն	Բոլոր երկրները	Ոչ նյութական ակտիվների արտոնագրային պայմանագրեր
7.	Ռոյալթիսթաթ (Royaltystat)	Արտոնագրային պայմանագրերի տվյալների բազա	Բոլոր երկրները	Ոչ նյութական ակտիվների արտոնագրային պայմանագրեր և ռոյալթիի դրույքաչափեր
8.	ԿեյթիՄայն (KtMine)	ԿեյթիՄայն Այփի	Բոլոր երկրները	Ոչ նյութական ակտիվների արտոնագրային

9.	Ստանդարտ ընդ Փուրս (Standard and Poor's)	Քեփիթալ Այքյու-Ֆայնեյնշիալս	Բոլոր երկրները	Կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվություն
10.	Թոմփսոն Ռոյթերս (Thompson Reuters)	Դիլսքան	Բոլոր երկրները	Ֆինանսական գործարքների վերաբերյալ տվյալներ (վարկեր)
		էյքոն		Ֆինանսական շուկաների վերաբերյալ տվյալներ